**Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ**

**««ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐՀՆԵՐԳԻ ՄԱՍԻՆ»**

**ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»**

**ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-955-04.11.2024-ՊԻ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ**

| N | Առաջարկության հեղինակը | Հոդվածը, կետը, որին վերաբերվում է առաջարկությունը | Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը) | Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը | Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը |
|---|---|---|---|---|---|
| **1.** | Կառավարություն | Նախագծի 1-ին հոդված | Առաջարկվում է նախագծի 1-ին հոդվածի 1-ին և 2-րդ մասերում «կրթության» բառը փոխարինել «մշակույթի» բառով: | Ընդունվել է | Ընդունվել է: |
| **2.** | Կառավարություն | Նախագծի 2-րդ հոդված | Առաջարկվում է նախագծի 2-րդ հոդվածում «նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր» բառերը փոխարինել «արհեստագործական և միջին մասնագիտական կրթական ծրագրեր» բառերով: | Ընդունվել է | Ընդունվել է: |
| **3.** | Կառավարություն | Նախագծի 4-րդ հոդված | Առաջարկվում է նախագծի 4-րդ հոդվածով նախատեսվող օրենքի 11-րդ հոդվածում «Անցումային դրույթ» բառերը հանելը վերանայել | Ընդունվել է մասամբ, օրենքի 11-րդ հոդվածի վերնագիրը խմբագրվել է | Ընդունվել է: |
| **4.** | Կառավարություն | Նախագծի 6-րդ հոդված | Առաջարկվում է նախագծի 6-րդ հոդվածի վերնագիրը լրացնել | Չի ընդունվել | Չի ընդունվել: |
| **5.** | Կառավարություն | Նախագծի 6-րդ հոդված | Առաջարկվում է նախագծի 6-րդ հոդվածի 3-րդ մասն շարադրել հետևյալ բովանդակությամբ նոր խմբագրությամբ՝ «3. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո | Չի ընդունվել | Չի ընդունվել: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | վեցամսյա ժամկետում օրհներգի նոր պաշտոնական տարբերակը(ները) հրապարակվում է (են) www.gov.am պաշտոնական կայքէջում և կրթության պետական կառավարման լիազոր մարմնի յութուբյան ալիքում:»: | | |
| **6.** | Ազգային ժողովի պատգամավոր Սիսակ Գաբրիելյան | Նախագծի 1-ին հոդված | Նախագծի 1-ին հոդվածի 1-ին կետի «հավելված» բառը փոխարինել «հավելվածներ» բառով և երկրորդ  կետով սահմանել, որ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ Հայաստանի Հանրապետության օրհներգը օրենքով նախատեսված որոշ դեպքերում կարող է օգտագործվել նաև սույն օրենքի 2-րդ, 3-րդ և 5-րդ հավելվածներով հաստատված երաժշտական և տեքստի կարճ խմբագրությամբ | Ընդունվել է | Ընդունվել է: |
| **7.** | Ազգային ժողովի պատգամավոր Սիսակ Գաբրիելյան | Նախագծի 4-րդ հոդված | Առաջարկվում է Օրենքի 11-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.<br>«Հոդված 11. Հայաստանի Հանրապետության օրհներգի տեքստը և երաժշտությունը<br>Հայաստանի Հանրապետության օրհներգը «Մեր հայրենիքն» է՝  սահմանված սույն օրենքի հավելվածներում (տեքստը՝ հիմնված Միքայել Նալբանդյանի խոսքերի վրա, երաժշտութունը՝ Բարսեղ Կանաչյան):»: | Ընդունվել է | Ընդունվել է: |
| **8.** | Ազգային ժողովի պատգամավոր Սիսակ Գաբրիելյան | Նախագծի 5-րդ հոդված | Առաջարկվում է օրենքի հավելվածով սահմանել Հայաստանի Հանրապետության օրհներգի ակապելլա տարբերակի նոտաները և խոսքերը | Ընդունվել է | Ընդունվել է: |
| **9.** | Ազգային ժողովի պատգամավոր Սիսակ Գաբրիելյան | Նախագծի 6-րդ հոդված | Առաջարկվում է նախագծի 6-րդ հոդվածի «կրթության» բառը փոխարինել «մշակույթի» բառով՝ համապատասխանեցնելով նահագծի 1-ին հոդվածի վերաբերյալ ՀՀ կառավարության առաջարկին | Ընդունվել է | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| **10.** | Ազգային ժողովի պատգամավոր Սիսակ Գաբրիելյան | Նախագիծ | Առաջարկվում է Օրենքը լրացնել 2-5-րդ հավելվածներով՝ սահմանելով Հայաստանի Հանրապետության օրհներգի ակապելլայի կարճ տարբերակը, ինչպես նաև նվագախմբով և նվագախմբով և երգչախմբով կատարման նոտաները և տեքստը և դրանց կարճ տարբերակները | Ընդունվել է | Ընդունվել է: |